



69 (253). ՔԻՐՎՈՒԹԵՆ,

*Մլբո անունով մարդ մե կէրթա մըա քուրդ քիրվեն, օսկի մե վոխ դուդե: Քիրվեն օսկի մե կիտա, սորա հաց կը դնե յառջև, օր ուտե:*

— *Գինա՛ս, քիրվա Մլբո, օսկին շուտ պտի տաս,— կըսե քուրդ:*

— *Հա՛, քիրվա, շուտ կը դառնում տամ:*

*Մլբոն բրդուճ դըռ չըր տարի բերան, քուրդ էլման կըսե.*

— *Քիրվա Մլբո, շուտ պտի դառնուս, հա՛:*

*Մլբոն էլ հաց չուտե, օսկին հմա կը հանե կիտա քիրվոն, կըսե.*

— *Ըղրրնե շուտ չկա, ըհը՛, ա՛ն քու օսկին:*

*Կըսե. դեչնա, զփետ կառնե ձեռք, դառ ու մայրում՝ դընկնա՝ ճամույա, դիկա ուր տուն ու քրդու հետ էլ քիրվութեն շէնե:*

